



Վահե Մխիթարյանը ՀՀ օրենսդրության առավել բարձր հասանելիությամբ ներկայացմանն ուղղված մի շարք նախաձեռնությունների՝ մասնավորապես **Օրենքի Տուն** տեղեկատվական-վերլուծական համակարգի համահեղինակ է:

Նա մի շարք հարթակների միջոցով ապահովել է մասնագետների՝ օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ տեղեկացվածությունը:

Ղեկավարել է «Կոնստանտ Կոնսալթինգ» հաշվապահական և խորհրդատվական ընկերությունը, կազմակերպել աշխատակազմի մասնագիտական պատրաստվածության ապահովումը, վերապատրաստումն ու թեստավորումը:

Դասավանդման և մասնագիտական խորհրդատվության երկարամյա փորձը լրացնում են Վահե Մխիթարյանի դիմագիծը: Նա ACCA-ի ուսանող անդամ է, հարկային օրենսդրության թեմաներով դիպլոմային աշխատանքների ղեկավար:

Ներկայումս Վահե Մխիթարյանը զբաղեցնում է «Եուրոմոթորս» ՓԲ Ընկերության գլխավոր հաշվապահի պաշտոնը: